Տուֆաշեն

Վարչական ղեկավար՝ Արտակ Եգորյան
Հեռ: 093 27 54 71
Մակերես՝ 11,7կմ²
Բնակչություն՝ 450
Ինդեքս՝ 3025
egorjan76@mail.ru

Տուֆաշեն գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի հարավ-արևմտյան մասում, Արթիկ համայնքի վարչական շրջան:Այն հյուսիսից սահմանակից է Հոռոմ, Նոր Կյանք գյուղերին, արևելքից Արթիկ համայնքին, հարավից Պեմզաշեն գյուղին, արևմուտքից Հայկասար, Հայրենյաց գյուղերի վարչական տարածքներին: Գտնվում է Արթիկից 9,3 կմ հեռավորության վրա, մարզկենտրոն Գյումրիից՝ 26 կմ հարավ-արևելք մայրաքաղաքից 115 կմ: Գյուղը հիմնադրվել է 1828թվականին: Հին անունը եղել է Արմտլու, 1946թվականին վերանվանվել է Տուֆաշեն: Բնակիչները հիմնականում գաղթել են արևմտյան Հայաստանի Բասեն, Մուշ, Ղարս գավառներից: Նախնիների մի մասի 1829-1830 թթ.-ին գաղթել են Ալաշկերտից: Գյուղի աշխարհագրական դիրքը նախալեռնային է, ծովի մակերևույթից բարձրությունը 1720 մետր է, ունի հիմնականում բլրաթմբային ռելեֆ: Կլիման բարենպաստ է, ամառը՝ զով, ձմեռը ցուրտ: Բնակչությունը զբաղվում է

անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղը հարուստ է տուֆի պաշարներով:

Գյուղում կան XIX դարի «Ժամ» «Սուրբ Սարգիս» եկեղեցի, «Թուխ Մանուկ» մատուռ (VII-XI դարեր), «Արմենքար» կիկլոպյան ամրոց: https://hushardzan.am/archives/12320

Տուֆաշեն գյուղի բնակիչները ավանդապաշտ և ավանդապահ են՝ միաժամանակ անտարբեր չլինելով նորի նկատմամբ: Պատմության մեջ կան փաստեր, որոնք վկայում են Տուֆաշենի բնակչության ըմբոստ բնավորության մասին: Ավանդաբար պահպանվել են նվիրվածությունը և հարգանքը ընտանիքի նկատմամբ, հարգանքն աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ: